



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿԱՆԴԱԿՆԵՐ Տ. ԱՐԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԹԵՇԵԱՆԻՆ
ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱԽՈՐՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱՐԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԹԵՇԵԱՆ,
ՈՐ Ի ՍՏԱՄԲՈՒԼ, ԹՈՒՐԳԻԱ**

Համայն հայության հոգևոր կենտրոն Լուսոյ Խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:
Սիրելի Սրբազան,

Տիրոջ կամքով եւ օրհնութեամբ Կ. Պոլսի Սուրբ Խաչ Դպրեվանքի եւ ապա Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Ժառանգաւորաց Վարժարանի յարկի ներքոյ ամբողջացնելով հոգևոր Ձեր ուսումնառութիւնը, բարեյիշատակ Շնորհք Պատրիարքի ձեռամբ արժանացաք կուսակրօն քահանայութեան սուրբ օծման՝ պատասխանատու առաքելութեան կոչուելով աստուածասէր մեր ժողովրդի կեանքում:

Մեզ համար գոհունակութիւն է անդրադառնալ, որ մեր Եկեղեցու անդաստանում Ձեր երեսնամեայ ծառայութիւնը արդիւնաւորուած է աստուածահաճոյ իրագործումներով: Երկար տարիներ հովուական պաշտօններ վարելով Կ. Պոլսի Պատրիարքութեան տարբեր եկեղեցիներում, Դուք պատրաստակամ յօժարութեամբ գնահատելի աւանդ էք բերել հայորդիների հաւատն ամրացնելու, նրանց հոգիներում մեր սրբազան ժառանգութեան եւ մայրենի լեզուի պահպանութեան հանդէպ սէրն ու նախանձախնդրութիւնը զօրացնելու սրբազան առաքելութեանը:

Ուրախ ենք, որ ներկայիս, որպէս Կրօնական Ժողովի ատենապետ եւ Պատրիարքութեան լուսարարապետ, ամենայն նուիրուածութեամբ ու ջանասիրու-

թեամբ շարունակում էք ներդնել Ձեր ջանքերը, որպեսզի միշտ շին ու պայծառ լինի Պատրիարքությունը եւ նրա հովանու ներքոյ՝ աշխոյժ հայորդեաց ազգային-եկեղեցական կեանքը:

Սիրելի Սրբազան,

Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն բերած տասնեակ տարիների Ձեր անսակարկ ծառայության ու վաստակի բարձր գնահատանքով՝ Հայրապետական այսու Կոնդակով Լուսոյ Խորան Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրական Մեր սէրը եւ ընդառաջելով Կ. Պոլսի հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Սուրբաթեանի միջնորդութեանը, շնորհում ենք Ձեզ

Ա Ր Ք Ո Ւ Թ Ե Ա Ն Պ Ա Տ Ի Ի:

Մեր մաղթանքն է, որ Տէրը օգնական լինի եւ զօրացնի նուիրեալ եկեղեցականիդ՝ Ձեր բարձր կոչման մէջ եւ պարգևի մնայուն ձեռքբերումներով լեցուն քաջառողջ կեանքի երկար տարիներ՝ ի պայծառութիւն Առաքելահաստատ մեր Սուրբ Եկեղեցու եւ Կ. Պոլսի հայոց Պատրիարքութեան:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեւեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 15-ն Յունիսի
յամի Տեառն 2006 եւ ի թուին Հայոց ՌՆԾԵ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 349